

ԱՄԻՐՈՂՎԱԹ ԱՄԱՍԻԱՅՈՒ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՂ

Ա. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

XV դարի նշանավոր հայ բժշկապետ Ամիրողվաթ Ամասիացին, ապրելով հայկական մշակույթի և գիտական մտքի բավականին մտալ ժամանակաշրջանում, կարողացավ իր բժշկական աշխատություններով պահպանել համաշխարհային բժշկագիտական գրականության լավագույն ավանդույթներն ու յուրատեսակ առաջնորդ լինել հետագա դարերի բժիշկների համար:

Ամասիացին հսկայական ներդրում ունի հայ բժշկական մատենագրության մեջ՝ գրելով այնպիսի հիմնավոր աշխատություններ, որոնք յուրատեսակ դպրոց եղան հետագա դարերի բժիշկների համար: Նրա բոլոր աշխատություններն էլ ունեն առաջաբան կամ հիշատակարան, որոնք ոչ միայն կարևոր տեղեկություններ են հաղորդում իր կյանքի և գործունեության մասին, այլև մանրամասն ներկայացնում են յուրաքանչյուր աշխատությունը գրելու շարժառիթը, նպատակն ու օգտագործած աղբյուրները: Այն մասին, թե ինչ աղբյուրներից է օգտվել Ամասիացին և որքանով է ազատ եղել իր թարգմանություններում, կխոսենք քիչ ուշ: Այստեղ ժամանակագրական կարգով ներկայացնում ենք նրա գրչին պատկանող և մեզ հասած աշխատությունները:

1. «Օգուտ բժշկութեան». այս գրքի առաջին մասը՝ «Ուսումն բժշկութեան» հատվածը, գրվել էր 1459թ. Կ. Պոլսում, սակայն գիրքն ամբողջությամբ ավարտվեց 1466-69 թթ. Ֆիլիպպոլյում: Գրքի երկրորդ մասը կոչվում է «Գիրք բժշկութեան տումարի»: Առաջին մասում խորհուրդներ է տալիս առողջության պահպանման և հիվանդների խնամքի մասին, երկրորդ հատվածում ներկայացնում է հիվանդությունները և այն դեղերն ու սննդակարգը, որոնք հարկավոր են տվյալ հիվանդության բուժման համար: Գրքի ընդարձակ առաջաբանում Ամասիացին գրում է. «Տեսայ շատ գրեանք որ շինած էր ի յայս արուեստս և շատաբանած, և մարդ կատարեալ չէր յիմանար. և չկար գիրք մն որ ինքն փոքր և համառօտ և օգուտ լիներ և մարդ օգտեր, որ ինքն հեշտ լիներ և փորձած և օգուտ»: Այսինքն՝ այս գրքի նպատակն է ամբողջությամբ ներկայացնել հիվանդությունները, դրանց առաջացման պատճառներն ու բուժման եղանակները:

«Օգուտ բժշկութեան» գրքի գրեթե բոլոր ձեռագրերում նշված երկու մասերից հետո բերվում է մի ընդարձակ աշխատություն՝ «Ախրապատին» («Դեղագործություն») վերնագրով (առայծմ անտիպ), որի առաջաբանում Ամասիացին գրում է, որ քանի որ դեղագործությունն առանց դեղագիտության չի լինում, ուստի ինքն այդ գրքում ներկայացնում է և՛ ախրապատինը (դեղագործություն), և՛ մուֆրատաթը (դեղագիտություն) և այդպես է գրել գիրքը, որպեսզի այն կատարյալ լինի այդ գիտությամբ զբաղվող ցանկացած մարդու համար: Այս «Ախրապատինը», անկասկած, «Օգուտ բժշկութեան» գրքի շարունակությունն է: «Օգուտ բժշկութեան» աշխատության առաջաբանում Ամասիացին հիշատակում է, որ այբբենական կարգով ցուցակ է կազմել, որտեղ ներկայացրել է դեղերի գորությունը, բաղադրյալ դեղերի ներգործությունը և դրանց փոխարինողները (տես էջ 7): «Օգուտ բժշկութեան»-ի բոլոր գլուխներում նա պարզապես առաջարկում է գործածել այս կամ այն դեղանյութը, սակայն չի նշում այդ դեղերի բաղադրիչները և պատրաստման եղանակները: Այդ

¹ Ամիրողվաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Եր., 1940, էջ 7: Այստեղևս փակագծերում կնշվի միայն էջը:

² Տես Ղևոնդ Յովնանեան, Հետազոտությունք ախրապաց ռասպօրտսի վրայ, Վրեսնայ, 1987, մասն Ա, տետր Բ, էջ 381:

ամենը նա բացատրում է «Ախրապատինում», որի միջոցով էլ հնարավոր է դառնում պատ-
րաստել «Օգուտ բժշկութեան» գրքում առաջարկվող բազմաթիվ բաղադրյալ դեղեր:

Բացի «Ախրապատինից» «Օգուտ բժշկութեան» գրքի ձեռագրերում պահպանվել է
նաև ընդարձակ աղյուսակների պատարան, որը հայ բժշկության պատմության մասնա-
գետ բժիշկ Լևոն Հովհաննիսյանն առանձին աշխատություն է համարում³: Մեր կարծիքով
այս բառարանը «Ախրապատինի» մի մասն է կազմում: Դա ապացուցվում է հետևյալ
կերպ.

ա) «Ախրապատինի» առաջաբանում Ամասիացին գրում է. «Ջանուանքն այլ դրի ի
կարգին հինգ լեզուով, յառաջն հայերեն, և յուներեն և դահմատերեն (լատիներեն), և ա-
րապերեն և պարսկերեն»⁴:

բ) «Ախրապատինի» ցանկում XXIII գլուխը վերնագրված է «Որ յիշէ գեղերուն գո-
րութին և զանուանքն հինգ լեզուով»⁵, սակայն այդ գլխում դեղերի հինգլեզվյան համար-
ժեքները չկան, այլ նշված են միևնույն բույսի տարբեր անվանումները:

Աղյուսակների պատարանում ներկայացված են դեղերի անունները՝ հայերեն
գլխաբառով և դրանց հունարեն, լատիներեն, արաբերեն և պարսկերեն համարժեքներով
(չնայած հաճախ հունարեն և լատիներեն համարժեքները բացակայում են), նաև համա-
պատասխան սյունակներում նկարագրվում են դեղերի որպիսությունը, ներգործությունն
օրգանիզմի վրա, չափաբաժինը և օգտակարությունը՝ ըստ հին բժիշկների:

Ըստ Հովհանյանի՝ հենց աղյուսակների պատարանին են վերաբերում «Անգիտաց
անպետ» գրքի հիշատակարանի հետևյալ տողերը.

Աարտիմ զսա հինգ լեզուով զինչ որ ուսա,

Ի Հայոց և ի Հոռոնց և յԱրապկա,

Ի Պարսից և ի Թուրքաց՝ քիչ Լաթինա.

Եւ ի Հայոցն են արարեր զսկիզբն դորա⁶:

Հովհանյանն այդ եզրակացությանն է հանգում, որովհետև հենց աղյուսակների
բառարանում են դեղերի գլխաբառերը հայերենով բերվում, իսկ «Անգիտաց անպետ»
գրքում դրանք մեծ մասամբ օտար բառեր են՝ արաբերեն, պարսկերեն կամ հունարեն⁷:

2. «Անգիտաց անպետ»⁸. Ամիրդովլաթ Ամասիացու երկրորդ մեծածավալ և մեծար-
ժեք աշխատությունն է, որը գրվել է 1478-82 թթ. Կ. Պոլսում: Այս աշխատությունը գրելու
շարժառիթը, ինչպես Ամասիացին գրում է գրքի առաջաբանում, դարձյալ մեզանում եղած
գրքերի կիսատ և թերի լինելն է. «Թէ զբնութիւնն կու գիտեաք՝ նա զերթիւնն չգիտեաք, և
թէ զգորութիւնն կու գիտնայաք՝ նա զբնութիւնն չեաք գիտնալ, և կայր՝ որ զանուանքն գի-
տեաք և զինքն չգիտեաք. և կայր՝ որ ո՛չ զանունն գիտեաք և ո՛չ զինքն և ո՛չ զիր փոխանն:
Եւ ի վերայ այսօր հանապազ մեզի պակասութիւն կայր վասն դեղերուն. և այս պատճա-
ռաւս այլ ազգաց կարօտեաք»⁹: Հենց այդ պակասը լրացնելու համար էլ նա ձեռնարկում է
իր բառարանը ստեղծելը և կազմում է բժշկագիտական-դեղագործական մի այնպիսի
հսկայական բառարան, որից ավելի ընդգրկուն և ծավալուն աշխատանք չի գրվել համաշ-
խարհային միջնադարյան բժշկական գրականության մեջ:

³ Տե՛ս **Левон Оганесян, История медицины в Армении (с древнейших времён до наших дней)**, в 5 частях, Ер., 1946, т. 3, էջ 20:

⁴ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Եր., 1958, էջ 115:

⁵ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. 1, Եր., 1959, էջ 664:

⁶ **Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպետ կամ Բառարան բժշկական միջոց, Վեներտիկ, 1926, էջ 681:**

⁷ Տե՛ս **Ղևոնդ Յովհաննան, նշվ. աշխ., տետր Բ, էջ 375:**

⁸ Այս աշխատությունը 1926 թ. Վիեննայում հրատարակեց Կ. Բասմաջյանը՝ քննադին կցելով
նաև հայերեն ու ֆրանսերեն ընդարձակ առաջաբաններ, գրքում նշված հիվանդությունների ֆրան-
սերենով ցուցակ և դեղանյութերի կողքին փակագծերում բերելով նաև նրանց լատիներեն ու ֆրան-
սերեն անվանումները:

⁹ **Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպետ...**, էջ 20:

3. «Ախրապատին». ոչ թե «Օգուտ բժշկութեան» գրքում նշված «Ախրապատինի» կրկնությունն է կամ նրա մշակված, ընդարձակ տարբերակը, այլ բաղադրվին ուրիշ, ինքնատիպ աշխատություն, որն իր նախորդից տարբերվում է թե՛ օգտագործած աղբյուրներով, թե՛ ներկայացվող դեղամյութերի քանակով: Գրվել է 1481 թ. Կ. Պոլսում: Ընդհանրապես, ախրապատինը, որը դեղագործության և դեղագիտության համակցություն էր, յուրաքանչյուր բժշկի ուղեկիցն էր դեղեր պատրաստելիս: Այդպիսի դեղագրքեր հայ բժիշկները կազմել են շատ վաղուց: Հերացին իր ախրապատինը կազմելիս օգտվել է ոչ միայն արաբերեն, պարսկերեն, հունարեն, այլև հայերեն ախրապատիններից, չնայած վերջիններում տրվում էր միայն դեղերի «ստածումը» (այս կամ այն հիվանդության համար նշանակվող դեղերը), իսկ «զվարդապետություն» կամ «զինաստ նախագիտութեանն» չկար¹⁰: Հայերեն ախրապատիններից դժգոհ է նաև Ամասիացին: Իր «Ախրապատինի» առաջաբանում նա գրում է. «Ձինչ որ կու յիշէին զայս շինուած իրացս զպատճառն չի գիտէին և զդեղերուն թուպրալն չգիտէին, և զինչ որ կու շինուեր չէր աղէկ ի գործն պակասութիւն կայր»¹¹: Այս տեսակետից հռչակապ նյութ էին տալիս արաբական աղբյուրները: Սրանցում, բացի դեղերի յուրահատկությունների նկարագրությունից, բարդ դեղերի պատրաստման մասին մանրամասն ցուցումներից, ներկայացվում էին նաև այն հիվանդությունները, որոնց կարող էր օգնել տվյալ դեղամիջոցը, ինչպես նաև ամենայն մանրամասնությամբ ճշտված էին հատուկ սննդակարգերը բոլոր հիվանդությունների ժամանակ: Սրանց կողքին, իհարկե, հայերեն ախրապատինները թերի էին ու աղքատիկ:

4. «Գիրք ռամկական». այս գիրքը բժշկության հետ կապ չունեցող այսպես կոչված «աստեղահանություն» է (Astrologie): Այստեղ ներկայացվում են մոլորակների շարժումները և դրանց հիման վրա արվող զուշակությունները: Ընդհանրապես, հին և հատկապես միջին դարերում հմայությունները, կախարդություններն ու սնահավատությունը մեծ տեղ էին զրավում բժշկության մեջ: Ամբողջ բժշկությունն այնքան էր ողողված սնահավատությամբ և մարդու օրգանիզմի ու հիվանդությունների մասին սնտիպապաշտական պատկերացումներով, որ անգամ ժամանակի կրթված և հմուտ բժիշկները չէին կարողանում լրիվ ազատվել այդ արմատացած սովորություններից և նշանակվող դեղերի հետ մեկտեղ իրենց հիվանդներին տալիս էին նաև տարբեր տեսակի թալիսմաններ ու հուտուրքներ: Այս տեսակետից միակ բժիշկը Հիպոկրատն էր, որն իր աշխատություններում որպես հիվանդությունների առաջացման պատճառ ոչ միայն չէր դիտում միստիկական-մոգական տարրեր ուժերը, այլև բացառում էր կրոնական-աստվածային գործոնը: Նրանից բացի՝ բոլոր հույն, հռոմեացի, արաբ բժիշկները, որքան էլ մեծապես կյում էին հիպոկրատյան բժշկության ազդեցությունը, բայց և այնպես նրանց աշխատություններում գիտական ռացիոնալ դատողությունների կողքին հանդես էր գալիս նաև աստվածային ուժի ու չար հոգիների միջամտությունը հիվանդությունների առաջացման պատճառների և բուժման ընթացքի գործում: Հետագայում Արևելքի բժիշկներն ու գիտնականներն ավելի մեծ տեղ էին տալիս հմայություններին և դրանց մասին բազմաթիվ հատորներ էին գրում: Ահա Ամասիացու «Գիրք ռամկականը» նմանատիպ աշխատություն է, որը, ինչպես ինքն է նշում գրքի հիշատակարանում, թարգմանել է թուրքերենից 1474 թ. մայիս-օգոստոս ամիսներին Կ. Պոլսում¹²: Դեռևս XII դարում մանատիպ մի աշխատություն էր գրել Հերացին: Գիրքը կոչվում է «Վասն քարանց և յատկութեանց նոցա և բժշկութեանց ականց» (տպագրվել է «Բազմավէպում» 1921թ.), որտեղ բավականին համակարգված ձևով ներկայացնում է քանկարժեք ու կիսաքանկարժեք քարերի հատկությունները և նրանց բուժիչ ազդեցությունները տարբեր հիվանդությունների դեպքում: Այս փոքրածավալ աշխատության մեջ Հերացին քարերին վերագրում է խորհրդավոր ու կախարդական հատկություններ և նշում է նրանց բուժիչ ազդեցությունն այնպիսի լուրջ հիվանդությունների դեպքում, ինչպիսիք են օձի խայթոցը, արնահոսությունը, մահացու թունավորումները, աչքի հիվանդությունները և

¹⁰ Տե՛ս «Մխիթար Հերացու Ջերմանց մխիթարութիւն», Վեներտիկ, 1832, էջ 126:

¹¹ «Բազմամէա». Վեներտիկ, 1927, տուխ. էջ 207:

¹² Տե՛ս «Սիոն», Երուսաղէմ, 1940, յունուար-փետրուար, էջ 28:

այլն¹³: Սա նույնպես արաբական ազդեցության հետևանք է: Հատկապես միջին դարերում, երբ գիտական միտքը խաղաղ գոյատևում էր սնահավատության, հմայությունների և սնտիապաշտության հետ, քանկարժեք քարերի գերբնական բուժիչ հատկությունների նկատմամբ հետաքրքրությունը, որ բժշկության մեջ կար դեռևս հնագույն ժամանակներից, ավելի աճեց հենց արաբ բժիշկների շրջանում:

5. «Վասն նշանաց հիւանդին, զկենաց և զմահուն»։ այս բավականին ընդարձակ գործը հայտնաբերել է Վահրամ Թորգոմյանը Փարիզի Ազգային գրադարանում՝ հայ բժշկական ձեռագրերի շարքում: Գրքի առաջին էջում կա «Ճատահպաշի Ըոսմատանին արարեալ, որ է Ամիրտովաթ բժիշկն Ամասիացի» վերտառությունը: Թե երբ է գրվել այս գործը, հայտնի չէ, սակայն Թորգոմյանը ենթադրում է, որ սա երկրորդ «Ախրապատինի» մի մասն է կազմում և պետք է գրված լինի «Անգիտաց անպետ» աշխատությունից շատ ավելի ուշ (նկատի ունի այս ձեռագրի ընդարձակ ծավալը): Այս գիրքը մինչ այժմ մնում է անտիպ:

Սա է Ամիրտովաթ Ամասիացու հարուստ գրական ժառանգությունը, որից մեծապես օգտվեցին և ազդվեցին ընդհուպ մինչև XIX դարի հայ բժիշկները:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե արդյոք վերոհիշյալ աշխատություններն ամբողջությամբ թարգմանություն են օտարալեզու բնագրերից, և որքանով է Ամասիացին հարազատ մնացել այդ սկզբնաղբյուրներին: Պետք է նշել, որ XII դարից սկսած՝ հայ բժշկական գիտությունը կարծես արաբականի արտացոլքը լինելը, և մի քանի դարերի հայ բժշկական մատենագրությունը թարգմանական բնույթ էր կրում: Սակայն իրենց թարգմանություններում հայ հեղինակները մեծ ինքնուրույնություն էին ցուցաբերում:

Թարգմանել բառն իր բառարանային իմաստով նախ և առաջ նշանակում է «մի լեզվով ասվածը կամ գրվածը վերարտադրել մի ուրիշ լեզվով»¹⁴: Այսինքն՝ թարգմանիչը պետք է ճշտությամբ ներկայացնի սկզբնագրի բովանդակությունը՝ առանց կրճատումների կամ հավելումների: Սակայն թարգմանել բառն ունի նաև բացատրել, մեկնաբանել, իսկ թարգմանություն բառը՝ նաև մեկնություն, բացատրություն իմաստները¹⁵: Արևելյան մի շարք լեզուներում նույնպես (արաբերեն, պարսկերեն) այդ բառն ունեցել և մինչև այսօր էլ պահպանել է այդ իմաստները: Հենց այդ իմաստներով էլ պետք է հասկանալ իր աշխատությունների առաջաբաններում Ամասիացու մի քանի անգամ գործածած թարգմանել բառը: Նա երբեք չի վերցրել որևէ օտարալեզու բնագիր և թարգմանել հայերեն, այլ օգտվելով բազմաթիվ աղբյուրներից՝ համակարգել ու վերամշակել է դրանք: «Օգուտ բժշկութեան» գրքի առաջաբանում Ամասիացին գրում է. «Համառօտ ժողովեցի և գրեցի զհին և զնոր բժշկապետացն զխօսքն, որ զամեն մեկին անունն ի յիր տեղն պիտի յիշենք» (էջ 5-6): Իսկ քիչ անց գրում է. «Գիրքս մեր խօսքն չէ. առաջի իմաստասիրացն և վերջին փիլիսոփայիցն և այս ամեն բժշկացն խօսքն է, որ է Բագարատն, և Գեղիանոսն, և Արճիճանիսն և Ֆլուսն և Դեվճանիսն, և Հունան... և այլ բազում ժողովուրդ որ ի յայս արուեստն շատ աշխատել են: Մենք սոցա զգիրքն ընտրել ենք և գրել շատ աշխատանք» (էջ 7): Իսկ «Անգիտաց անպետի» առաջաբանում նշում է. «Թարգմանեցաւ այս գիրքս մեկմեկ դեղերուն զօրութիւն ի բազում զրեմոյ այլ ազգաց...»¹⁶, ապա ավելացնում է. «Հաւաքեցաք շատ զրեանք ի յայլ ազգաց և աշխատեցաք և ուսաք զբառերն և զանուանքն ազգի ազգի»¹⁷: Այստեղ նույնպես հիշատակում է այն բժիշկների անունները, որոնցից օգտվել է. «Անուանք բժշկապետացն այս են. Բագարատն, Գեղիանոս, Սինայի որդին, Դիսկրիտոսն, Իպնպայտարն, Պատեհին»¹⁸:

¹³ Տե՛ս «Բագմավեպ», Վենետիկ, 1821, հոկտեմբեր, էջ 306-307:

¹⁴ Լուդաբո Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Խ. Ա. Եր., 1976, էջ 423:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 423:

¹⁶ Ամիրտովաթ Ամասիացի, Անգիտաց անպետ կամ Բառարան բժշկական նկարագ. էջ 10:

¹⁷ Նույն տեղում, էջ 11:

¹⁸ Նույն տեղում, էջ 14:

Արաբերենի, հունարենի, պարսկերենի կատարյալ իմացությունը Ամասիացուն հնարավորություն էր տալիս օգտվել ժամանակի լավագույն բժշկագիտական աշխատություններից, մյուս կողմից՝ երկար տարիների բժշկական գործունեությունն ու մեծ փորձառությունը պարտադրում էին նրան քննադատաբար մոտենալ օգտագործվող աղբյուրներին: Եվ «Օգուտ բժշկութեան», և՛ «Անգիտաց անպէտ» աշխատություններում Ամասիացին բարեխղճորեն նշում է այն բժիշկների անունները, որոնցից վերցրել է տվյալ բժշկական նյութը: Մյուս կողմից՝ «Օգուտ բժշկութեան» գրքի առաջաբանում նա գրում է, որ երկար տարիներ ծառայել է հիվանդներին (էջ 7), ուստի հնարավոր չէր, որ իր կարողացածին նա չավելացներ նաև այն ամենը, ինչը ձեռք էր բերել երկարատև բժշկական գործունեության, տարբեր դեղերի չափաբաժինների և բարդ համակցությունների բազմաթիվ փորձարկումների շնորհիվ: Ուստի նա հաճախ հերքում է բժիշկների ասածը որևէ դեղանյութի հատկության կամ հիվանդության առաջացման պատճառների մասին, ուղղում է նրանց կարծիքները և ներկայացնում իր տեսակետը: Որևէ հիվանդության բուժման համար տարբեր բժիշկների առաջարկած դեղերի կողքին նա հաճախ ազատորեն նշում է նաև իր կողմից առաջարկվող դեղամիջոցը (տես էջ 105, 152, 200, 295, 385, 470, 514 և այլն):

Նկատելի է նաև մի հետաքրքիր իրողություն. «Օգուտ բժշկութեան» գրքում Ամասիացին մարդաբանության, հիվանդությունների բուժման մասում գրեթե միշտ նշում է օտար հեղինակի անունը, իսկ հիվանդությունների նշանների, դրանց առաջացման պատճառների, հիվանդի խնամքի և սննդակարգի մասին գրելիս ավելի հազվադեպ է հիշատակում բժիշկների անունները: Այդպես է նաև «Անգիտաց անպէտում». հեղինակը ավելի մեծ ինքնուրույնություն է ցուցաբերում դեղանյութերի նկարագրության, նրանց տեսակների անվանման և ստացման եղանակների բաժնում, իսկ երբ անցնում է օրգանիզմի վրա այս կամ այն դեղանյութի ունեցած ներգործությանը, նա մեծապես հետևում է իր աղբյուրներին: Այս իրողությունը ևս հասկանալի է: Այն, ինչը վերաբերում է մարդաբանությանը, տարբեր հիվանդությունների բուժմանն ու օրգանիզմի վրա դեղերի ունեցած ազդեցությանը, դարավոր փորձառություն և մեծ ճշգրտություն է պահանջում: Իսկ հիվանդների խնամքի, նրանց սննդակարգի ու դեղագիտության համար պարզապես բժշկական հմտություն և անձնական դիտարկումներ են հարկավոր:

Ամասիացու աշխատությունների աղբյուրների մասին խոսելիս հարկ ենք համարում հիշատակել բանասիրական գիտությունների թեկնածու Իլիա Աբուլաձեի հոդվածը: Նա հիշատակում է 1936 թ. բժիշկ Լ. Կոտետիշվիլու հրատարակած վրացերեն բժշկական մի հին աշխատություն՝ «Գիրք բժշկութեան» վերնագրով (գրված 1206-08 թթ. և մեզ հասած XV դարի ձեռագրով): Այս աշխատությունը համեմատելով «Օգուտ բժշկութեան» գրքի հետ՝ հոդվածի հեղինակը եզրակացնում է, որ դրանք, իրարից անկախ, միևնույն օտարալեզու աղբյուրից են գալիս և ոչ թե տարբեր հեղինակների աշխատություններից են քաղված, այլ մի ամբողջական ստեղծագործության տարբեր ժամանակների թարգմանություններ են¹⁹: Ըստ Աբուլաձեի՝ դրանով է բացատրվում երկու գրքերի կառուցվածքային մնանությունը: Նա նշում է, որ թեև վրացերեն տարբերակը բաժանված չէ երկու մասի, բայց այնտեղ գրեթե նույնությամբ շարադրված են «Ուսումն բժշկութեան» հատվածի գլուխները: Հետաքրքիր տրամաբանությամբ նա բոլոր այն հատվածները, որոնք կան հայերեն գրքում, բայց պակասում են վրացերենում, միջարկություններ և հետագա դարերում կատարված հավելումներ է համարում, իսկ միայն վրացերեն գրքում առկա երկու գլուխները դիտում է որպես սկզբնագրից բխած գլուխներ²⁰: Եվ այս եզրակացությունն անում է այն դեպքում, երբ նույնիսկ հայտնաբերված չէ այն ենթադրյալ սկզբնաղբյուրը, որը պետք է թարգմանած լինեին Ամասիացին և վրացերեն գրքի հեղինակը: Վերջապես, անտեսելով երկու գլուխներում առկա ակնհայտ տարբերությունները (գլուխների տարբեր հաջորդականությունը, գլուխների վերնագրերի և քանակի տարբերությունները) Աբուլաձեն

¹⁹ Տե՛ս «Սովետական գրականություն», Եր., 1941, № 12, էջ 102:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 102:

Ամասիացուն և վրացերեն գրքի հեղինակ Նախկին Խոջային համարում է թարգմանիչներ այդ բառի հիմնական իմաստով:

Չհամաձայնելով Աբուլաճեի կարծիքին՝ պետք է նշենք, որ երկու գրքերում առկա կառուցվածքային և ձևային նմանությունը պարզապես ժամանակին տարածված նույնաբնույթ արարական գրքերի ազդեցության հետևանք էր: Լևոն Հովհաննիսյանն իր «Հայ բժշկության պատմություն» գրքում նշում է, որ «Օգուտ բժշկութեան» գիրքն իր կառուցվածքով նման է ազգությամբ պարսիկ արարագիր Ալի բեն Էլ-Աբասի «Թագավորական գիրք» (Maleki) աշխատությանը: Այդպես էին գրվում ժամանակի բոլոր բժշկական գրքերը, որպեսզի կարողանային ընդգրկել այն ժամանակվա բժշկության բոլոր բաժինները և հնարավորություն տային ընթերցողին հեշտությամբ գտնել փնտրվող գլուխները²¹: Իսկ բովանդակային նմանությունների պատճառն ավելի պարզ է: Ի վերջո, մարդաբանության, թերապիայի բնագավառում մի քանի դար շարունակ նոր խոսք չէր ասվում, այլ մի փոքր ձևափոխված կրկնվում էր այն, ինչը վաղուց ներկայացվել էր նախ հույն, ապա արաբ բժշկապետների կողմից: Բացի այդ՝ «Օգուտ բժշկութեանի» առաջաբանում Ամասիացին մի քանի անգամ նշում է, որ մի շարք աղբյուրներից է օգտվել («գիրքս ամենայն բժշկացն խօսքն է» կամ «շատ գրեանք էի ժողովել»), մեկ առ մեկ նշում է բժիշկների անունները, որոնցից նյութեր է քաղել, և հնարավոր չէ ենթադրել, որ նա, իր ձեռքի տակ մի գիրք ունենալով, պարզապես այն թարգմանել է հայերեն:

Նույնը կարելի է ասել նաև Ամասիացու երկու «Ախրապատիհների» մասին: «Օգուտ բժշկութեան» գրքին կցված «Ախրապատիհի» առաջաբանում նա գրում է, որ իր գիրքը կազմելիս օգտվել է պրաբական աղբյուրներից, հատկապես ազգությամբ հրեա Մուսի բեն Մայմունի «Մինհաճի տուքան» գրքից («Բժշկական Մինհաճ գիրք»)²²: Սակայն այս գրքում ամբողջությամբ չէին նշվում դեղերի հատկությունները և դրանց ներգործությունը հիվանդությունների վրա, այսինքն՝ բացակայում էր դեղագիտությունը, ինչն էլ Ամասիացին ավելացնում է իր «Ախրապատիհում»՝ օգտվելով օտար աղբյուրներից և իր ունեցած գիտական պաշարից: Դրա համար էլ գրքի առաջաբանում նշում է. «Որ ի սոցանէ բան օգտի... նա տեսնու թէ ինչպէս է յաւելցուցել զգիրքս և ինչպէս է ձեւել զդեղերոյն զօրութիւնն»²³: Այսինքն՝ թարգմանել բառի փոխարեն նա արդեն գործածում է յաւելուլ և ձեւել բառերը:

Երկրորդ «Ախրապատիհը» (1481թ.) Ամասիացին գրել է՝ հետևելով միջնադարյան արաբ բժիշկ և բուսագետ Իբն Էլ-Բեյթարի ստեղծած բառարանին: Բայց սա ևս հասարակ թարգմանություն չէ: Բացի նրանից, որ դեղերի գործության (ներգործության) և բուժման եղանակների մասին խոսելիս նա հաճախ ավելացնում է նաև մեկ այլ բժշկի դեղատոմսը կամ սեփական տարբերակը, նաև ինքնուրույն բաժին է գրել դեղերի համակցությունների, տարբեր դեղախառնուրդի պատրաստման եղանակների, նրանց բաղադրիչների չափաբաժինների և ներգործության մասին: Այս բաժինը որևէ օտարալեզու աղբյուրից վերցված չէ, այլ Ամասիացու սեփական գիտափորձերի և դիտարկումների արդյունքն է. «Ի յայս արուեստս շատ աշխատեցայ մինչև զսա գտա և ստուգեցի կրկին, որ հեշտութեամբ յիմանան... և հասկանան զձաձուկ արուեստն որ այս ամենայն բժշկապետքն զայս ծածկեալ էին և չէին գրել բժշկարանին»²⁴: Այսինքն՝ գրքի այս հատվածում Ամասիացին հանդես է գալիս որպես ինքնուրույն հեղինակ:

Հովհաննյանն այս «Ախրապատիհը» ոչ թե Ամասիացու աշխատանքն է համարում, այլ մի հավաքածու, որը քաղված է դեռևս հնուց հայ բժիշկներին հայտնի ախրապատիհներից և դեղագործական գրականությունից: Նրա կարծիքով, այս հավաքածուն գրվել է ոչ թե որոշակի մի ժամանակահատվածում մի հեղինակի ձեռքով, այլ աստիճանաբար և տարբեր բժիշկների ու ընդօրինակողների միջոցով²⁵: Իր այս կարծիքը Հովհաննյանը հիմնավորում է երկու փաստարկներով:

²¹ Տե՛ս Лёвом Оганесян, նշվ. աշխ., էջ 14-15:

²² Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Եր., 1958, էջ 115:

²³ Նույն տեղում, էջ 115:

²⁴ «Բազմավէպ», Վեներտիկ, 1927, յուլիս, էջ 207:

²⁵ Տե՛ս Ղևանդ Յովնանյան, նշվ. աշխ., տեսր Ի, էջ 395-396:

Առաջինը այս «Ախրապատինի» այբբենական դասավորությունն է: «Օգուտ բժշկութեան» գրքին կցված «Ախրապատինը» ոչ թե շարադրված է այբբենական դասավորությամբ, այլ բաժանված է 25 տարբեր գլուխների: Իսկ այս «Ախրապատինում» բոլոր դեղագրերը դասավորված են այբբենական կարգով²⁶: Սակայն այս փաստարկը հիմնավոր չէ, քանի որ.

ա) դեռևս առաջին «Ախրապատինի» XXI գլխում Ամասիացին, նշելով դեղերի փոխարինողները, բերում է մոտ 200 անվանումից բաղկացած դեղերի համառոտ ցուցակ՝ այբբենական դասավորությամբ:

բ) Այբբենական կարգով է գրված նաև «Անգիտաց անպէտ» մեծածավալ աշխատությունը:

գ) Ի վերջո, նույն հեղինակը, առաջին գիրքը գլուխների բաժանելով, հետագայում մյուսը կարող էր այբբենական կարգով գրել՝ նկատի ունենալով վերջինիս ավելի ընդարձակ լինելը և հեշտացնելու համար փնտրվող դեղագիրը գտնելը:

Հովնանյանը նշում է նաև, որ հաճախ այբբենական դասավորությունը հավաքածուում խախտված է, և դրա պատճառը «Ախրապատինի» հավաքածու լինելն է: Սա ևս լուրջ փաստարկ չէ, քանի որ նման խախտումներ կա՛ն կարող էր հեղինակն անել անուշադրության հետևանքով, կա՛ն կարող էին հետագա ընդօրինակողներն ավելացրած լինել՝ իրենց հայտնի մեկ այլ աղբյուրից լրացում կատարելով կամ սեփական դեղագիրն առաջարկելով:

Հովնանյանի բերած երկրորդ փաստարկը բանասիրական-լեզվաբանական է: Նա նշում է, որ նախորդ «Ախրապատինն» ունի իր սեփական ոճը, մինչդեռ այս «Ախրապատինի» լեզուն միօրինակ չէ, հատվածները ոճերով տարբերվում են իրարից, ինչը նույնպես բացատրվում է հատընտիր ժողովածու լինելով²⁷:

Բայց ոճական տարբերություններ նկատվում են նաև նախորդ «Ախրապատինում»: Այստեղ ևս ողջ շարադրանքի ընթացքում ոճը անփոփոխ ու միակերպ չի մնում: Հովնանյանը դրանք շեղումներ է համարում, որոնք մուծել են հետագա ընդօրինակողները: Տարբեր ժամանակահատվածներում ընդօրինակողների միջամտությամբ կարելի է բացատրել նաև այս գրքի ոճական շեղումները: Յուրաքանչյուր ընդօրինակող, ձեռքի տակ ունենալով այլ աղբյուրներ, կարող էր իր լրացումները կատարել իրեն հատուկ ոճով: Ի վերջո, ոճական այդպիսի շեղումներ հանդիպում են բոլոր հին ձեռագրերում, որոնք մեզ են հասել տարբեր ժամանակահատվածներում կատարված բազմաթիվ ընդօրինակություններով: Թերևս գրիչների ակտիվ միջամտությամբ են բացատրվում նաև այն իրողությունները, որ «Ախրապատինում» միևնույն դեղագիրը զուգահեռ անվանումներով է հանդիպում, կամ միևնույն բաղադրիչ մասերով մի քանի դեղատոմսեր են պատահում:

Նշված երկու փաստարկներից բացի՝ Հովնանյանը նշում է նաև, որ վերջին «Ախրապատինը» նախորդից երեք անգամ ավելի շատ դեղագրեր է պարունակում²⁸: Ըստ մեզ՝ այս տարբերությունը պետք է լիներ, քանի որ գրվելով ավելի ուշ՝ այս «Ախրապատինը» պարտավոր էր ավելի ընդարձակ և կատարյալ լինել, որտեղ պետք է երևալին նաև Ամասիացու մտավոր զարգացումն ու նրա կատարած փորձարկումների արդյունքները: Ինչո՞ւ պիտի Ամասիացին գրեր մի աշխատանք, որն իր բովանդակությամբ և ընդգրկված նյութի ծավալով նման լիներ նախորդին:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե Ամասիացին օգտվել է արդյոք իրենից առաջ ստեղծված հայերեն բժշկական գրականությունից: Վստահ կարելի է ասել, որ նա ծանոթ է եղել իրենից առաջ ապրած բժիշկների աշխատություններին: «Անգիտաց անպէտի» առաջաբանում նա հիշատակում է Մեծն Մխիթարին (Մխիթար Հերացի), Ահարոնին,

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 396-397:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 398-399:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 398:

նրա որդի Ստեփանոսին, սրանց ազգականներ Ճօշին, Սարգիս, Յակոբ, Դեղին, Ըմաւոն, Վահրամ բժիշկներին: Այս բժիշկների աշխատություններից, բացառությամբ Հերացու, ոչ մեկը մեզ չի հասել: Նրանց մասին պահպանվել են տեղեկություններ Հերացու, Ամասիացու և մի քանի այլ բժիշկների գործերում: Ամասիացին, ծանոթ լինելով շուրջ մեկ տասնյակ բժիշկների գրքերին, իր աշխատություններում ոչ մի անգամ չի նշում որևէ հայ բժշկի կարծիքը այս կամ այն դեղանյութի և հիվանդության մասին: Ջերմերի տեսակները ներկայացնելիս անգամ չի հիշատակում Հերացու անունը:

Ինչպես տեսանք, և՛ «Անգիտաց անպէտ» գիրքը, և՛ երկու «Ախրապատիները» Ամասիացին գրել էր՝ հետևելով օտարալեզու աղբյուրներին (արաբերեն, պարսկերեն, հունարեն): Այս գրքերի առաջաբաններում նա իր դժգոհությունն էր հայտնել իր ձեռքի տակ եղած հայ բժշկական գրականության նկատմամբ, քանի որ դրանք թերի էին ու համառոտ: Այդ գրականությունից նա նյութեր չի վերցրել իր աշխատությունների համար, քանի որ նրա տրամադրության տակ էր համաշխարհային բազմալեզու բժշկական գրականությունը, որն ավելի մշակված էր, ավելի նոր ու կատարյալ:

Ամփոփելով ամբողջը՝ նշենք, որ Ամասիացին թողեց մի այնպիսի գրական ժառանգություն, որի հետևողությամբ ստեղծվեցին հաջորդ մի քանի դարերի բժշկագիտական աշխատությունները: Նրա աշխատություններն ավելին էին, քան հասարակ քարզամությունները, քանի որ նա համակարգեց և հայ ընթերցողին ներկայացրեց այն լավագույնը, որ ստեղծել էին օտար հեղինակները: Դրա հետ մեկտեղ՝ նա երբեք կուրաբեն չհետևեց իր սկզբնաղբյուրներին, այլ լինելով բազմահմուտ և փորձառու բժիշկ, քննադատաբար մոտենալով բնագրերին՝ վերամշակեց համաշխարհային բժշկության դարերով կուտակված արժեքները: Եթե մախկինում հայ բժիշկը պետք է հսկայական, այն էլ օտարալեզու գրականություն թերթեր իրեն հուզող հարցի պատասխանը գտնելու համար, այժմ կարող էր օգտվել մի գրքից՝ այնտեղ գտնելով այն ամենը, ինչ իրեն պետք էր: Հենց դրա համար էլ Հովնանյանն Ամասիացուն անվանում է «թարգմանիչ, հաւաքող, մեկնիչ»²:

А. А. КАРАПЕТАН - О медицинском наследии Амирдовлата Амасиаци. - В статье представляется литературное наследие знаменитого врача 15-го века Амирдовлата Амасиаци, исследуется вопрос о первоисточниках его произведений. На основании опубликованных в разное время немногочисленных сведений впервые представлены все дошедшие до нас произведения Амирдовлата медицинского содержания, время и мотив их создания. Учитывая филологические разногласия, обсуждается вопрос о том, являются ли эти произведения оригинальными или переводными. На основании нескольких фактов, делается вывод, что Амирдовлат не просто перевел иностранные, особенно арабские подлинники, а систематизированным образом представил армянскому читателю лучшие произведения мировой медицины, добавляя к этому еще и результаты собственных наблюдений и экспериментов, а также тот опыт, который он приобрел в течение своей долгой медицинской деятельности.

² «Լեւոնի Կովնանեան, նշվ. աշխ., տեսր Ա, էջ 113: